Եղեք քաղաքակիրթ և կարգապահ

Մի՛ թափեք աղբը աղբամաններից, աղբանոթներից ու աղբարկղերից դուրս:

Աղբով լի տոպրակները մի՛ թողեք դրանց համար չսահմանված վայրերում (բազմաբնակարան շենքերի մուտքերում, փողոցներում, բակերում):

Մի՛ ստեղծեք չարտոնագրված աղբավայր բնակելի տան և տնամերձ հողամասի շրջակայքում:

Մի՛ այրեք աղբը աղբարկղերի, աղբամանների և կոնտեյներների մեջ:

URBAN FOUNDATION for sustainable development | ՈՒՐԲԱՆ կայուն զարգացման ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ, 0070 Երևան, Ալեք Մանուկյան 9

Հեռ.՝ 060 61 20 70/72

էլ. փոստ՝ ufsd@aua.am

www.urbanfoundation.am

Ծրագիրը իրականացվել է Հայաստանում Լիտվայի Հանրապետության դեսպանության ֆինանսական աջակցությամբ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ.

ՊԼԱՍՏԻԿ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՁԵՐԺ ԱԼԱՎԵՐԴԻ

URBAN FOUNDATION for sustainable development | ՈՒՐԲԱՆ կայուն զարգացման ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը Հայաստանում Լիտվայի Հանրապետության դեսպանություն ֆինանսական աջակցությամբ 2020թ. հունվար-օգոստոս ամիսներին Ալավերդի քաղաքում իրականացրել է «Կարողություններ հանուն մաքուր շրջակա միջավայրի. պլաստիկ թափոններից զերծ Ալավերդի» ծրագիրը, որի նպատակն էր բարձրացնել Ալավերդու և հարակից քաղաքային համայնքների բնակչության բնապահպանական գիտելիքները, մասնավորապես աղբի տեսակավորման և վերամշակման բնագավառում:

Ի՞նչ օգուտներ և խնայողություններ կարելի է ունենալ աղբի տեսակավորումից

Աղբի տեսակավորումն ու ճիշտ կառավարումը

- Կհանգեցնի հողի, օդի և ջրային ավազանի աղտոտման կրճատմանը,
- Կապահովի եկամուտներ՝ թափոնների ուղղակի վաճառքից և խնայողություններ՝ տեղափոխվող աղբի քանակի կրճատումից,
- Կնպաստի նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը. կրկնակի օգտագործման և վերամշակման շնորհիվ արտադրվող աղբի ծավալի մի զգալի մասը նորից կվերադարձվի տնտեսություն,
- Կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Ի՞նչ պետք է անի մեզնից յուրաքանչյուրը կոշտ կենցաղային թափոնների հիմնախնդիրները լուծելու համար

Ձանացեք կրճատել թափոնների քանակը.

- Միանգամյա օգտագործման առարկաների փոխարեն աշխատեք օգտագործել բազմակի օգտագործման իրեր ու առարկաներ, որոնք պատրաստված են ավելի կայուն նյութերից (օրինակ՝ պլաստիկ ամանեղենի փոխարեն օգտագործեք ապակե կամ կերամիկական ամանեղեն):
- Ոչ պետքական իրերը վերավաճառեք կամ նվիրեք կարիքավորներին (բարեգործական կազմակերպությունների միջոցով):
- Գնումներ կատարելիս նախապատվությունը տվեք բազմակի օգտագործման կամ վերամշակման ենթակա փաթեթավորմամբ ապրանքներին:
- Ձեզ հետ միշտ ունեցեք կտորից կամ բնական նյութերից կարված պայուսակներ գնումների համար:
- Պոլիէթիլենե տոպրակներն օգտագործեք խնամքով:
- Վերանորոգեք Ձեր իրերը, ոչ թե շպրտեք դրանք:
- Կրճատեք թղթի ծախսը՝ օգտագործելով այն երկու կողմից:
- Սննդային մնացորդները (հատկապես տնամերձ հողամասում) օգտագործեք կոմպոստավորման համար: